ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՆՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ, վավերագրեր, վկայություններ կան, որոնց մեջ առանձնակի տեղ են գրավում լուսանկարները: Եթե ուսումնասիրողն իր հետազոտություններում կարող է առաջիններն անվարան մատնանշել, ապա այլ են լուսանկարների օգտագործման պայմանները: Վերջիններս որպես վավերագիր կարող են ներկայացվել միայն այն դեպքում, երբ ապացուցված են, և կասկածի տեղիք չեն տալիս նրանց ծագման հանգամանքները: Այդպիսի հետազոտությունների ընթացքում հաճախ հետաքրքիր փաստերի ենք առնչվում:

Ահա թե ինչ է գրում Վահան Միրագենցն իր «Հայկական ջարդերու փաստաթղթերը» աշխատության «Ա» մասում (Կ. Պոլիս, 1920, էջ 142) ստորև ներկայացվող լուսանկարի մասին.

«... 160 ընտանիքներէ բաղկացած կարաւան մը կառքերով և իրենց գույքերով ճամբայ հանուեցան և տարուեցան դէպի Մամախաթուն. ճամբան ամէնքն ալ կողոպտուեցան, մինչեւ իսկ իրենց շապիկներն առնուեցան:

Սմբատ եպիսկոպոս կառքով Երիզա ղրկուեցաւ, որուն մասին անկէ վերջ բնաւ չլսուեցաւ: (Տարաբաղդ կղերականին մարտիրոսագրութեան եղերական մահուան պարագաները կարող եղանք ստուգել): Յունիս 1920-ին Ժողովուրդի Ձայն թերթին մեջ հրատարակուեցաւ սոյն լուսանկարը, ուր կը տեսնուին Սմբատ եպիսկոպոսի և բողոքական ազգապետին գլուխները, դրուած սեղանի մը վրայ, որուն շուրջը կը կանգնին հրեք զինուած դահիճներ: «Ժողովուրդի Ձայնը»-ի ընթերցողներէն մին լուր բերաւ թէ այս լուսանկարին ճախակողմեան հրեշն ինքը լաւ կը ճանչնայ, որ ներկայիս Պոլիս Թօփհանէ թաղին մեջ սրճարան մը բացած է և որ յաճախ իրեն պատմած է թէ ինք Կարին գտնուած է, ուրկէ առիթով մը հոս փախած է: Խմբագիրներէն մին ղրկուեցաւ այս պարագան հաղորդելու անգլիական ոստիկանութեան: Ոճրագործը ձերբակալուելով՝ անգլիական պահականոցը տարուեցաւ, ուր խոստովանեցաւ թէ լուսանկարին մէջ գտնուողն իսկապէս ինքն է, սակայն իր լուսանկարը թշնամաբար հոն զետեղուած է: Այս բացատրութիւնը չափազանց ծիծաղելի էր: Այսքան յայտնի ոճրագործ մը փրկելու համար՝ թուրք ոստիկանութիւնը ձեռք առաւ անգլիական ոստիկանութեան դուռը, և պնդեց որ այդ մարդն անմեղ էր: Անգլիա-

կան ոստիկանութիւնն այդ ապերեսանները վռնտելէ զատ ուրիշ բան մը չէր կրնար ընել: Ու հիմա ոճրագործը կը սպասէ արդարութեան:

Հիմա պատմենք, թէ ինչպէս ձեռք անցուեցաւ այս լուսանկարը: Այդ երեք հրէշները որոնք հայ առաջնորդն և բողոքական ազգապետը տարագրելու պարտականութիւն ստանձներ էին՝ քաղաքէն ոչ շատ հեռու տեղ մը երկու զոհերը կը խողխողեն և փութով քաղաք կը վերադառնան: Գերման սպայ մը որուն մարդասիրական զգացումը կ'երեւի թէ տակաւին բոլորովին մեռած չէին իր մէջ, կը հետաքրքրուի երկու հայ պետերու կեանքով՝ և կը հարցնէ երեք ոճրագործներուն թէ ինչո՞ւ համար այդքան շուտ վերադարձած էին: Անոնք հպարտութեամբ կը պատմեն թէ ինչպէս այդ խայիճներուն գործը վերջացուցած էին: Գերման սպան այդ ոճիրին վրայ ինքզինքը երջանիկ ձեւացնելով՝ կ'ըսէ թէ այդ երկու անձինք այս երկրին շատ վնասակար ըլլալով՝ զանոնք սպաննելով իրենք մեծ ծառայութիւն մը մատուցած եղան իրենց հայրենիքին: Սակայն որպէս զի բոլորովին վստահ ըլլայ, որ իսկապէս այդ խիստ վտանգաւոր հայերը սպաննուած են, ինք կը փափաքի անպատճառ ունենալ անոնց գլուխները: Ոճրագործներուն շատ գոհացուցիչ նուէր կը խոստանայ, որուն վրայ արիւնարբուներն անմիջապէս ճամբայ կ'ելլեն և ետ կը բերեն պահանջուած երկու գլուխները: Սպան՝ երկու գլուխները երեք հրէշներուն հետ կը լուսանկարէ և ապա ժամանակ մը վերջ Պոլիս կուգայ, որ ատեն հայ օրիորդի մը հետ ծանօթանալով՝ այդ լուսանկարն անոր կը յանձնէ օր մը հրատարակելու համար, իբր ապացոյց գործուած այդ մեծ ոճիրին»:

Սմբատ Եպս. Սաատեթյան

Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը ծնվել է 1871թ. Իզմիթի նահանգի Աղաբազար քաղաքում, Գրիգոր Սաատեթյան աշխարհական անվամբ: 1889 թվականի սեպտեմբերին մտնում է Արմաշի դպրեվանք և յոթ տարի անց Օրմանյան Սրբազանի կողմից ձեռնադրվում վարդապետ, իսկ 1910-ին Մատթեոս Բ կաթողիկոսը նրան ձեռնադրում է եպիսկոպոս: 1897-ից մինչև 1907 թվականը նա Շապին Գարահիսարի թեմի առաջնորդն էր, այնուհետև ընտրվում է Էրզրումի հոգևոր առաջնորդ և մինչ եղերական մահը կատարում իր սրբազան պարտականությունները:

Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը ոչ միայն իր ժողովրդին նվիրյալ հոգևորական գործիչ էր, այլև նշանավոր մատենագիր և գիտնական: Նրա արգասաբեր գրչի արդյունքն է «Ներսես Լամբրոնացի» ընդարձակ ուսումնասիրությունը, որը հրատարակվել է 1903-ին: Նա հանդես է եկել հայոց եկեղեցիների և պատմական հուշարձանների վերաբերյալ հոդվածներով: Մեզ է հասել Սմբատ եպիսկոպոսի «Արծափու եկեղեցին» համառոտ ակնարկը՝ գրված 1913 թվականի փետրվարի 12-ին, Արմաշի դպրեվանքի քսանհինգամյա հոբելյանի առթիվ:

Երբ կոտորածների գուլպը հասավ Էրզրում, տեղի ազգային գործիչները Սմբատ եպիսկոպոսի գլխավորությամբ քայլեր ձեռնարկեցին Կարնո բնակչությանն արհավիրքից փրկելու ուղղությամբ: 1915-ի մայիսին տեղահանության հրամանը հասավ նաև Էրզրում: Քաղաքի կուսակալ Թահսին բեյը Սմբատ եպիսկոպոսին հինգ օր ժամանակ է տալիս հոտը քաղաքից դուրս բերելու համար: Երբ հրամանը փոխելու խնդրանքով թուրքական և օտարերկրյա պաշտոնյաների դռները բախելն այլևս ապարդյուն էր, Սմբատ եպիսկոպոսը խնդրում է՝ գոնե տարագրության ժամկետը երկարաձգել: Այս խնդրանքը չի մերժվում, և տրվում է երկու շաբաթ պայմանաժամ: Տարագրության ճանապարհին իր հոտն առաջնորդելու նրա բոլոր աղերսները մերժվեցին:

Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը տարագրվում է 1915թ. հունիսի վերջին, տարագրյալների վերջին քարավանի հետ՝ Բասենից Կարին աքսորված Կորյուն վարդապետ Սրապյանի, իր խոհարարի և Առաջնորդարանի վաղեմի բարապան Կարապետի ընկերակցությամբ: Տեղահանվածների այս քարավանի վերջին կայանը Երզնկան էր, որտեղ իր առաջնորդած հոտի հետ դժնդակ մահն է ընդունում նաև տարաբախտ հոգևորականը: Թե ինչպիսի սարսափելի կտտանքների է ենթարկվել ազգանվեր այս հայորդին, նկարագրում է Թեոդիկն իր «Գողգոթա հայ հոգեւորականութեան» (Նիւ Եորք, 1985) աշխատության մեջ (էջ 159-160)՝ անդրադառնալով եղեռնը վերապրած Արտաշես Լեփյանի վկայությանը. «Ժանտարմաներ իրենց լաթէ տնակէն դուրս կը հանեն զիրենք եւ «մեռելներու քաղաքէն» ներս մտցնելով՝ կառաջարկեն Սրբազանին, որ փոսն իր ձեռքո՛վը փորէ: Անխօս, անտրտունջ, համակերպութեան եթերային շնորհովն առլցուն, ահաւոր պեղումը կատարելէ ետք, Սմբատ եպիսկոպոս անոր եզրը ծնրադիր կ'աղօթէ. յետոյ պզտիկ քար մը առնելով՝ կը խաչակնքէ եւ փոս կը ձգէ: Դահիճները կը խոյանան վրան, կը մերկացնեն, նախ մէկ թեւը կը կտրեն, վերջն ալ մէկ ոտքը, պոկունքը կը դանկընտեն, աչքերը կը փորեն, վառ լուցքի մը կը բռնեն մօրուքին, վերջին գնդակ մը ալ կուրծքին... եւ փոս կը գլորեն Քրիստոսի սիրովը վառուած եւ հաւատքովը զօրացած Արմաշականին չարակոչկոճ մարմինը: Նախ քան մարտիրոսութիւն, այս գեղանձն եպիսկոպոսը նշաւակ ալ դարձած է ժանտարմաներէն միայն գազանավառ կիրքին: Այնուհետեւ, համանման խժդժութեանց կ'ենթարկուին Կորիւն վարդապետ եւ երկոքին աշխարհականք»:

Վահան Միրագենցը լուսանկարում պատկերված երկրորդ զոհին սխալմամբ համարել է բողոքական ազգապետ: Սակայն, ըստ վերոհիշյալ վկայության, կարող ենք վստահությամբ նշել, որ երկրորդ նահատակը Կորյուն վարդապետ Սրապյանն է:

Ըստ Թեոդիկի նշված աշխատության (էջ 174)՝ Կորյուն վարդապետն աղետի օրերին կալանակապ նախ Կարին է տեղափոխվել, ապա

տեղի առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանի հետ նահատակվել է Երզնկայի գերեզմանատանը: Նրա եղերասարսուռ մահվան հանգամանքներին ծանոթացանք Սմբատ եպիսկոպոսի վերաբերյալ վկայության մեջ:

Կորյուն վարդապետ Սրապյանը ծնվել է Բասենում, 1877թ.: Եղել է Ս. Կարապետ վանքի միաբան, իսկ 1902-ին Կոմիտաս վարդապետի հետ միասին օծվել է և Հ. Խոստեղյան Սրբազանի կողմից ձեռնադրվել Ախթամարում: Կորյուն վարդապետն առաջնորդն էր Սղերդի, Սպերի, Սլիվանի ու Պշերիկի առաջնորդական փոխանորդությունների: Մինչ նահատակությունն առաջնորդում էր Բասենի թեմը:

Առաջնորդվելով տարբեր վկայություններով՝ ենթադրվում է, որ զոհերի մարմիններն ամփոփված են Երզնկայի գերեզմանատանը՝ «Նահատակաց Հուշարձանի» մոտ, որն այժմ կործանված է:

Հավատարիմ իրենց ուխտին՝ հազարավոր հոգևորականներ առաջնորդեցին իրենց տարաբախտ հոտը նաև մահվան ճամփաներում և կրեցին տառապանքներից սարսափագույնը:

Այսօր յուրաքանչյուր ապրող հայի հոգում հնչում է մեկ ու կես միլիոն զոհերի ձայնը: Նրանց կյանքին վերաբերող փոքրիկ հուշն անգամ հիշողության իրավունք ունի, և մենք՝ ապրողներս, պարտք ունենք ոգեկոչելու նրանց, քանզի մահը մոռացությունն է: Միայն ոգեկոչելով կարող ենք վերապրեցնել նրանց ժամանակի հավերժության մեջ: